

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերի նախապատրաստական աշխատանքների մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2016 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասերի նախապատրաստական աշխատանքների հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/:

Նշվեց, որ Գավառի պետական համալսարանի Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016թ. 1-ին կիսամյակի դասերը բոլոր մասնագիտությունների չորրորդ և հինգերորդ կուրսերում սկսվելու են 2015թ. հունվարի 8-ին և ավարտվելու են հունվարի 30-ին, ավարտական կուրսերում ավարտվելու են հունվարի 26-ին: Դասացուցակները կայքում կտեղադրվեն մինչև հունվարի 30-ը, որը համաձայնեցված է ԳՊՀ առկա ֆակուլտետների դեկանատների, համապատասխան ամբիոնների և դասախոսների անհատական ծանրաբեռնվածության հետ: Դասընթացների կազմակերպման նպատակով հայտարարությունները և համապատասխան բաժինների տեղաբաշխումը տեղադրված է կայքում :

Արտահայտվեցին – Ա. Ե. Համբարձումյանը, Ա. Ա. Ոսկանյան

Նշվեց, որ ՀՀ պաշտպանության նախարարին և ոստիկանապետին ուղարկվել են գրություններ՝ համապատասխան ստորաբաժանումների ուսանող աշխատակիցներին դասերին մասնակցության թույլտվության վերաբերյալ:

Որոշեցին – Գավառի պետական համալսարանի Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2016թ. 1-ին կիսամյակի դասերը կազմակերպել հնգօրյա ռեժիմով՝ բոլոր օրերին, բացի երկուշաբթի և երեքշաբթի օրերից: Համալսարանում գործող կանոնակարգի համաձայն՝ միջանկյալ քննություններին մասնակցելու իրավունք վերապահել միայն ընթացիկ տարվա առաջին կիսամյակի ուսման վարձը վճարած ուսանողներին:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Ա. Ա. Ոսկանյան